ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

«ԳՄՄՀ-ԳՀԾՁԲ-24/43» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Հ.Մարտունի **04.11.2024թ.**

10:00

Նիստին մասնակցել են հանձնաժողովի նախագահ՝ Ա. Քոչարյանը,անդամներ՝ Ս. Աբրոյանը, Վ.Թամոյանը, Կ. Դավթյանը, Թ. Դավթյանը

1. **ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
   Հանձնաժողովը որոշեց հաստատել նիստի հետևյալ օրակարգը
   1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
   2. Ընթացակարգի ներկայացված հայտերում կատարված շտկումների մասին:
   3.Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու, պայմանագիր կնքելու որոշման , և անգործության ժամկետ հայտարարելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

2. «ԳՄՄՀ-ԳՀԾՁԲ-24/43» **ծածկագրով գնման ընթացակարգի ներկայացված հայտերում կատարված շտկումների մասին:**

2.1 **«Արս-Անն» ՍՊԸ, հայտում** արձանագրվել էին հրավերի սահմանված կարգի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ուստի հանձնաժողովը կասեցրել էր նիստը և հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում էր ուղարկել մասնակիցներին ՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

2.2 Հանձնաժողովը ուսումնասիրեց **«Արս-Անն» ՍՊԸ** կողմից ներկայացրած շտկումները :

2.3 Մասնակիցների կողմից մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկվել են բոլոր անհամապատասխանությունները: Ուստի գնահատող հանձնաժողովի կողմից նշված կազմակերպության հայտը գնահատվել է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

3. Ընտրված մասնակիցների և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին

3.1 **«ԳՄՄՀ-ԳՀԾՁԲ-24/43»** ծածկագրով գնման հրավերի 1-ին չափաբաժնի մասով հաղթող մասնակից է ճանաչվել
«Արս-Անն» ՍՊԸ -Ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և անգործության ժամկետ սահմանելէ 10 օրացուցային օր՝ ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի:
Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված մասնակցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

3.3 Օրենքով սահմանված կարգով պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշատանքային օրվա ընթացքում (կանխիկ փողի ձևով ներկայացնելու դեպքում) ներկայացնել պայմանագրի ապահովում՝ գնման գնի 10 (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ գնման գնի 15 (տասնհինգ) տոկոսի չաթով: Եթե ապահովումները ներկյացվելու են բանկային երաշխիքի տեսքով, ապա սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 10 (տասը) աշխատանքային օր::

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Քոչարյան

Անդամներ _____ Ս. Աբրոյան

_____ Վ. Թամոյան

_____ Կ. Դավթյան

_____ Թ. Դավթյան

Քարտուղար՝ _____ Կարեն Սիմոնյան